

Կ-040²-26.06.2017-ՖԿ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲԱՆԿԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ
ԱՊԱՀՐՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների եվ ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածը.

1) լրացնել 1.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են ապահովագրական (վերաապահովագրական) ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվներից՝ արտահերթ՝ հետևյալ հերթականությամբ՝

- 1) Առաջին՝ պարտադիր ապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները,
- 2) Երկրորդ՝ պարտադիր ապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջները.
- 3) Երրորդ՝ կամավոր ապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները.
- 4) Չորրորդ՝ կամավոր ապահովագրության պայմանագրից բխող այլ պահանջները.
- 5) Հինգերորդ՝ վերաապահովագրության ընդունած (ստանձնած) ռիսկերի գծով վերաապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները.
- 6) Վեցերորդ՝ վերաապահովագրության ընդունած (ստանձնած) ռիսկերի գծով վերաապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջները:
- 7) Առաջինից-վեցերորդ՝ հերթերում չընդգրկված ապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջները:

Եթե ապահովագրության պայմանագրերից բխող պահանջների արժեքը գերազանցում է ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունը, ապա գերազանցող մասը բավարարվում է սույն հոդվածով ապահովագրության պայմանագրերից բխող համապատասխան պահանջների

բավարարման համար նախատեսված հերթում: Եթե տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունն է գերազանցում պահանջների արժեքը, ապա գերազանցող մասը ընդգրկվում է լուծարային միջոցների կազմում և օգտագործվում է օրենքով սահմանված կարգով;»:

2) 2-րդ մասի «գ» ենթակետի 2-րդ նախադասությունում «իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն.» բառերը փոխարինել «իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները, որոնք բավարարվում են սույն հոդվածի 1.1-րդ մասով սահմանված հերթականությամբ.» բառերով:

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված դեպքերում Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցված գումարի չափով Բյուրոն պահանջի իրավունք է ձեռք բերում ապահովագրական ընկերության նկատմամբ այն հերթում (հերթերում), որի ընթացքում տվյալ տուժողը (պարտատերը) համաձայն սույն հոդվածի իրավունք կունենար բավարարել իր պահանջը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների եվ ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի 1-ին ընթերցումից հետո ստացված առաջարկությունների և դիտողությունների

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արփինե Հովհաննիսյան	«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ պարբերություն	Անհրաժեշտ է օրենքի նշված դրույթում ավելացնել այն սկզբունքները, որոնց հիման վրա ԿԲ-ն կսահմանի միևնույն տնտեսություն վարելու չափանիշները:	Ընդունվել է: Նախագծում սահմանվել է, որ անձինք համարվում են միևնույն տնտեսություն վարող, եթե նրանցից մեկի ֆինանսական վիճակի վատթարացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մյուսի ֆինանսական վիճակի վատթարացմանը, կամ նրանցից մեկի եկամուտը կամ ֆինանսական այլ միջոցները օգտագործվում են կամ կարող են օգտագործվել համատեղ ծախսերի կամ մյուսի ծախսերի ֆինանսավորման նպատակով:	
2.	ՀՀ	«Բանկերի և	Նախագծում	Ընդունելի է: Նախագծով	

	կառավարություն	բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդված	սահմանել ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի առկայությունը բանկում: Նույնաբովանդակ փոփոխություն կատարել նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում:	սահմանվել է նշված գործառույթի պարտադիր առկայությունը բանկում:	
3.	ՀՀ կառավարություն	«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	Նախագծով խմբագրել գործող օրենքի 34-րդ հոդվածը և սահմանել բանկերի կողմից	Ընդունելի է: Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսվել է բանկերի կողմից իրենց գործառնությունների իրականացման	

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդված	իրենց գործառնություններ րի պատվիրակման հնարավորություն	պատվիրակման հնարավորությունը:	
--	--	---	--	----------------------------------	--